

ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Թիվ _____

ք. Երևան

«__» _____ 20 թ.

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորչի 9), այսուհետ՝ «Պահառու», ի դեմս տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանի, որը գործում է Պահառուի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և (ֆիզիկական անձի դեպքում անուն ազգանուն)

_____ (իրավաբանական հասցե՝ -----), այսուհետ՝ «Հաճախորդ», ի դեմս տնօրեն _____, որ գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով »Կողմեր», դեկլարավելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- 1.1 Սույն Պայմանագրում օգտագործվող հասկացությունները ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, կիրառելի լինելու և բրոքերային ծառայություններից օգտվելու դեպքում՝ նաև Պահառուի Տնօրինության որոշմամբ հաստատված և սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ում շարադրված «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (Բրոքեր) կողմից բրոքերային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ-ով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանված և այդտեղ կիրառվող իմաստը, եթե այլ բան ակնհայտորեն և միանշանակորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից: Սույն պայմանագրի դրույթները մեկնաբանելիս գերակայությունը տրվում է Պայմաններով սահմանված հասկացությունների սահմանմանը:
- 1.2 Այլ հասկացությունները, որոնք օգտագործվում են սույն պայմանագրում, սակայն սահմանված չեն 1.1. կետում նշված ակտերում, մեկնաբանվում են՝ հիմնվելով դրանց կիրառման գործարար շրջանառության սովորույթների և միջազգային փորձի վրա:
- 1.3 Ցանկացած փաստաթղթի (ներառյալ սույն պայմանագիրը) վկայակոչումը, մեջբերումը կամ դրան հղումը ենթադրում է մեջբերում, վկայակոչում կամ հղում տվյալ փաստաթղթի գործող տարբերակին, ներառյալ բոլոր փոփոխություններն ու լրացումները, եթե տվյալ վկայակոչման, մեջբերման կամ հղման մեջ հատուկ նշմամբ այլ բան չի նախատեսված:
- 1.4 Կետերին բոլոր հղումները վերաբերում են սույն պայմանագրին առանց հավելվածների, եթե հատուկ նշմամբ այլ բան չի նախատեսված:
- 1.5 Ցանկացած անձի վկայակոչումը վերաբերում է նաև ժամանակ առ ժամանակ նրան փոխարինող անձին, նրա ներկայացուցչին կամ իրավահաջորդին:
- 1.6 Գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության մեկնաբանման վրա:
- 1.7 Սույն պայմանագրի անբաժանելի մասեր են հանդիսանում այն հավելվածները (այսուհետ՝ Հավելվածներ), որոնք կիրառելի են սույն Պայմանագրի հիման վրա տվյալ Հաճախորդի հետ ծագող իրավահարաբերություններում: «Սույն պայմանագիր» արտահայտությամբ (հասկացությամբ)

ընդգրկվում են նաև Հավելվածները, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում տվյալ հղումի մասնավոր դեպքից կամ չի արված հատուկ նշում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 2.1 Պահառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ով սահմանված «Ամերիաբանկ» ՓԲԸ պահառության ծառայությունների մատուցման սակագներով (այսուհետ՝ Սակագներ) սահմանված վճարի դիմած հաճախորդին մատուցել սույն պայմանագրի 2.2. կետերում նշված պահառության ծառայությունները:
- 2.2 Արժեթղթերի պահառության ծառայությունները ներառում են, մասնավորապես՝
- 1) արժեթղթերի հաշիվներ բացելը և վարելը՝ այդ հաշիվներով գործառնությունների ժամկետներն ու եական պայմանները գրանցելով.
 - 2) արժեթղթերի նկատմամբ հաճախորդի գույքային իրավունքների գրանցման հետ կապված ծառայություններ.
 - 3) Կենտրոնական դեպոզիտարիայում և այլ պահառուների մոտ արժեթղթերի անվանատեր հանդես գալը՝ որպես պահառության ծառայությունների իրականացման միջոց և երաշխիք.
 - 4) արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով թողարկողից կամ այլ պահառուներից օրենքով, ինչպես նաև Հաճախորդի կողմից թողարկողին կամ այլ պահառուներին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցումը.
 - 5) արժեթղթերի նկատմամբ կամ դրանցից բխող սեփականության և այլ գույքային իրավունքները հաշվառելու, այդ իրավունքներն ամրագրելու, փոխանցելու, դադարեցնելու և այլ գործառնությունները գրանցելու հետ կապված այլ ծառայություններ, որոնց բովանդակության, մատուցման կարգի և փոխհատուցման վերաբերյալ Պահառուն և Հաճախորդը կպայմանավորվեն առանձին համաձայնագիր կնքելու դեպքում և միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 2.3 Հաճախորդը Պահառուի կողմից մատուցված ծառայությունների դիմաց նրան վճարում է՝ Սակագներով սահմանված կարգով և չափով: Նոր սակագների սահմանման դեպքում Պահառուն համապատասխանաբար միակողմանիորեն փոփոխում է Հավելված 1-ը և ծանուցում այդ մասին Հաճախորդին սույն պայմանագրով սահմանված կարգով: Ընդ որում, նման պատշաճ ծանուցում է համարվում նաև փոփոխված Սակագները Պահառուի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրումը: Վճարումները իրականացվում են Հաճախորդի՝ Պահառուի մոտ սպասարկվող Բանկային հաշվից յուրաքանչյուր Բանկային օրվա վերջում անակցեպտ գանձումների միջոցով՝ տվյալ օրվա գործառնությունների համար վճարման ենթակա գումարի չափով:
- 2.4 Հաճախորդին պահառուական ծառայությունները սույն պայմանագրի համաձայն մատուցվում են՝
- 2.4.1 Բրոքերային ծառայությունների հետ կապված
 - 2.4.2 Հավատարմագրային կառավարման հետ կապված
 - 2.4.3 Անկախ 2.4.1. և 2.4.2. կետերում նշված ծառայությունների մատուցումից
- 2.5 Հավելված 2-ը, հանդիսանալով սույն պայմանագրի անբաժանելի մասը, կարգավորում է Կողմերի միջև Հաճախորդի արժեթղթերի պահառությունից բխող այն հարաբերությունները, որոնք կապված են Պահառուի Կողմից Հաճախորդին մատուցվող Բրոքերային ծառայությունների հետ, և Կողմերի համար պարտադիր է, եթե նրանց միջև կնքվել է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր, և Կողմերի համար պահպանում է ուժը Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ընթացքում:
- 2.6 Հավելված 3-ը, հանդիսանալով սույն պայմանագրի անբաժանելի մասը, կարգավորվում է Կողմերի միջև Հաճախորդի արժեթղթերի պահառությունից բխող այն հարաբերությունները, որոնք կապված են Պահառուի Կողմից Հաճախորդին մատուցվող Հավատարմագրային կառավարման ծառայությունների հետ, և Կողմերի համար պարտադիր է, եթե նրանց միջև կնքվել է Հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման պայմանագիր, և Կողմերի համար պահպանում է ուժը Հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ընթացքում:

- 2.7 Հավելված 4-ը, հանդիսանալով սույն պայմանագրի անբաժանելի մասը, կարգավորվում է Կողմերի միջև Հաճախորդի արժեթղթերի պահառությունից բխող այն հարաբերությունները, որոնք անկախ են Պահառուի կողմից այլ ծառայություններ մատուցելու փաստից:
- 2.8 Հավելված 5 –ը, հանդիսանալով սույն պայմանագրի անբաժանելի մասը, կարգավորում է կողմերի միջև Հաճախորդի արժեթղթերի պահառությունից բխող այն հարաբերությունները, որոնք կապված են հաճախորդի անվանատիրոջ հաշվի սպասարկման հետ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 3.1 2.2. կետի 1-ին ենթակետում նշված հաշիվները բացելու և սպասարկելու առանձնահատկությունները կարգավորվում են սույն պայմանագրի հավելվածներով և Մակագներով:
- 3.2 Սույն պայմանագրի 2.2. կետի 2-րդ ենթակետում նշված ծառայությունների մատուցումը իրականացվում է 2.2. կետի 1-ին ենթակետում նշված հաշիվ(ներ)ը՝ այսուհետ՝ Արժեթղթերի հաշիվներ կամ Հաշիվներ բացելու և սպասարկելու միջոցով:
- 3.3 2.2. կետի 2-րդ ենթակետում նշված ծառայությունների մատուցումը իրականացվում է արժեթղթերի հաշիվների սպասարկման միջոցով արժեթղթերի նկատմամբ հաճախորդի սեփականության իրավունքը, իսկ համապատասխան տեխնիկական, ինստիտուցիոնալ և իրավական հնարավորության պարագայում՝ նաև այդ իրավունքի սահմանափակումները գրանցելու միջոցով:
- 3.4 Հաճախորդը գիտակցում է, որ Հաշիվը դրանում հաշվառվող արժեթղթերի առաջնային պահպանման վայր չի հանդիսանում, և Պահառուն չի վարում դրա սեփականատերերի ռեեստրը: Պահառուն հանդես է գալիս Հաշվում հաշվառվող արժեթղթերի անվանատեր այդ արժեթղթերի այլ պահառուների առջև՝ նրանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Անվանատիրոջ հաշիվներում Հաճախորդին պատկանող արժեթղթերը միացվում են Պահառուի կամ վերջինիս Պահառուների մյուս հաճախորդների արժեթղթերին և չեն նույնականացվում որպես Հաճախորդինը: Հաճախորդի արժեթղթերի նույնականացումը իրականացվում է բացառապես Պահառուի մոտ բացված և սպասարկվող Արժեթղթերի հաշիվներում: Արտասահմանյան արժեթղթերի պարագայում Պահառուի անվանատիրոջ հաշիվները սպասարկող պահառուները նույնպես կարող են հանդես գալ որպես նույն արժեթղթերի անվանատեր այլ պահառուների առջև՝ վերջիններիս մոտ ունենալով արժեթղթերի անվանատիրոջ հաշիվներ: Այդպիսով, արտասահմանյան արժեթղթերի պարագայում արժեթղթերի պահառությունը իրականացվում է գլոբալ բազմամակարդակ անվանատիրական համակարգի միջոցով, որի յուրաքանչյուր մակարդակում որպես պահառու հանդես եկող անձի մոտ բացված հաշիվներում արժեթղթերը նույնականացվում են բացառապես այդ պահառուի անմիջական հաճախորդ հանդիսացող անձի (պահառուի, իսկ Պահառուի դեպքում՝ Հաճախորդի) անունով:
- 3.5 Սույնով Հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է Հաշվով որոշակի գործառնությունների կատարման անհնարինությունը՝ հաշվի առնելով արժեթղթերի պահառության գլոբալ բազմամակարդակ անվանատիրական համակարգի առանձնահատկությունները: Մասնավորապես արտասահմանյան արժեթղթերով գրավի իրավունքի գրանցման կամ արգելադրման հանձնարարականները կարող են չկատարվել այդ արժեթղթերով առքուվաճառքի հանձնարարականների ընդունման, փոխանցման և/կամ կատարման համակարգի առանձնահատկությունների բերումով և դրա համար ինստիտուցիոնալ, կազմակերպչական, տեխնիկական և իրավական հնարավորությունների բացակայության պատճառով:
- 3.6 Պահառուն այլ պահառուների մոտ հանդես է գալիս որպես Հաճախորդի արժեթղթերի անվանատեր՝ ապահովելու համար սույն պայմանագրի 2.2. կետում նշված ծառայությունների պատշաճ մատուցման հնարավորությունը:
- 3.7 Պահառուն սույն պայմանագրի 2.2. կետի 4-րդ ենթակետում նշված ծառայության մատուցումը կազմակերպում է 3.4. կետում նշված համակարգի միջոցով: Թողարկողից Հաճախորդին ուղղված տեղեկությունները և փաստաթղթերը Հաճախորդին փոխանցվում են դրանք ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում: Հաճախորդից թողարկողին ուղղված տեղեկությունները և փաստաթղթերը Պահառուի կողմից փոխանցվում են համապատասխան կազմակերպչական, տեխնիկական, ինստիտուցիոնալ և իրավական հնարավորությունների առկայության դեպքում՝ 3.4. կետում նշված համակարգի միջոցով:

- 3.8 Սույն պայմանագրի 2.2. կետում նշված ծառայությունների մատուցման կարգի և պայմանների առանձնահատկությունները սահմանվում են սույն պայմանագրի Հավելվածներով և Սակագներով:
- 3.9 Ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ Հաճախորդի հաշիվներով գործառնությունների կատարումը ենթակա է մերժման, եթե Հաճախորդի՝ Պահառուի մոտ բացված և վարվող բանկային հաշիվներում առկա չեն սույն պայմանագրի համաձայն համապատասխան գործառնության դիմաց վճարում կատարելու համար անհրաժեշտ գումարները:
- 3.10 Պահառուն ամիսը մեկ անգամ Հաճախորդին տրամադրում է քաղվածք Հաշվում առկա արժեթղթերի և դրանց կարգավիճակի վերաբերյալ: Պահառուն Սակագներով սահմանված վճարի դիմաց տրամադրում է Հաշվից քաղվածքներ ըստ Հաճախորդի գրավոր պահանջի:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1 Հաճախորդը պարտավորվում է բարեխղճորեն և պատշաճ կարգով վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և Սակագների և համապատասխան:
- 4.2 Պահառուն պարտավորվում է բարեխղճորեն և պատշաճ կերպով մատուցել սույն պայմանագրի 2.2. կետում նշված ծառայությունները՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր ֆիդուցիար պարտականություններին վերաբերող իմպերատիվ կանոնները:
- 4.1 Կողմերը պարտավորվում են բարեխղճորեն համագործակցել սույն պայմանագրի կատարման շրջանակներում:
- 4.2 Հաճախորդը պարտավոր է Պահառուին անմիջապես տեղեկացնել ներկայացված փաստաթղթերում ներառված տեղեկությունների ցանկացած փոփոխության վերաբերյալ՝ այդպիսի փոփոխությունից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելով նոր համապատասխան փաստաթուղթ:

5. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ

- 5.1 Հաճախորդը հայտարարում և հավաստիացնում է, որ՝
- 1) ինքը իր գրանցման (քաղաքացիության) երկրի օրենսդրության համաձայն պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել սույն պայմանագիրը:
 - 2) Սույն պայմանագիրը ստորագրող անձինք իրավասու են ստորագրել այն Հաճախորդի անունից համաձայն օրենսդրության և Հաճախորդի ներքին իրավական ակտերի (իրավաբանական անձի դեպքում) և այդպիսի ստորագրությամբ Հաճախորդի համար ստեղծել իրավական ուժ ունեցող պարտականություններ:
 - 3) Հաճախորդը պատշաճ կերպով ծանոթացել է սույն պայմանագրին որպես հավելվածներ կցված բոլոր սակագներին, հայտարարագրերին, տեղեկացումներին, զգուշացումներին, պայմաններին և այլ փաստաթղթերին, դրանց հետ կապված չունի որևէ հարց, առաջարկություն, դրանց բովանդակությունը իրեն լրացուցիչ բացատրելու կարիք չունի և լիարժեքորեն գիտակցում է դրանց բովանդակությունը:
 - 4) Համաձայն է, որ սույն պայմանագրով իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարները և ծառայությունները մատուցելու համար Պահառուի կրած այլ ծախսերը անակցեպտ կարգով Պահառուի կողմից գանձվեն Պահառուի մոտ բացված և սպասարկվող բանկային հաշիվներից, ինչպես նաև բանկային այլ հաշիվներից:
 - 5) _____(այլ երաշխիքներ՝ ըստ անհրաժեշտության)
- 5.2 Պահառուն երաշխավորում է, որ՝
- 1) պատշաճ իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձ է և իրավասու է կնքել սույն պայմանագիրը,
 - 2) տիրապետում է պահառուական ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ լիցենզիաների և թույլտվությունների,
 - 3) Պահառուի անունից սույն պայմանագիրը ստորագրող անձինք իրավասու են ստորագրել այն և այդպիսով Պահառուի համար ստեղծել սույն պայմանագրից բխող պարտավորությունները:

6. ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

- 6.1 Սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև ցանկացած հաղորդագրություն, փաստաթղթերի ներկայացում, փոխանցում, փոխանակում համարվում է պատշաճ կերպով իրականացված, եթե առաքվել է հետևյալ հասցեներով՝
1) Պահառուի համար՝ ք. Երևան, 0010, Գրիգոր Լուսավորչի 9, էլ. փոստ՝ brokerage@ameriabank.am, հեռ.՝ 374 10 513170, 374 10 561111 (1732)
2) Հաճախորդի համար՝ _____, ֆաքս՝ _____, էլ. փոստ՝ _____, հեռ.՝ _____
- 6.2 Կողմերը սույնով հավաստում են, որ 6.1 կետում նշված հասցեներով առաքված հաղորդագրությունը համարվում է պատշաճ կերպով առաքված՝ կապի հուսալի միջոցներով: Կողմերի համար հուսալի կապի միջոցներ են համարվում Պայմաններում նշված կապի միջոցները:
- 6.3 Սույն պայմանագրի շրջանակներում Պահառուի հետ Հաճախորդի հարաբերությունների համար պատասխանատու և իրավասու լիազորված անձ է հանդիսանում _____: Հաճախորդը սույն պայմանագիրը կնքելուց հետո 2 օրվա ընթացքում Պահառուին է ներկայացնում նշված անձի անձնական տվյալները (անձնագրի տվյալները) և իրավաբանական անձի գործադիր մարմնի հաստատմամբ՝ ստորագրությամբ և կնիքով հաստատված (իրավաբանական անձի դեպքում) կամ նոտարի կողմից հաստատված (ֆիզիկական անձի դեպքում) իրավասու անձի (անձանց) ստորագրության նմուշները: Նշված անձի փոփոխության դեպքում Հաճախորդը պարտավոր է տվյալներ ներկայացնել իր նոր լիազորված անձի համար, այլապես նշված անձը Պահառուի կողմից լիազորված ներկայացուցիչ չի համարվի:
- 6.4 6.3 կետը չի կիրառվում, եթե Հաճախորդը ֆիզիկական անձ է և ինքն է պատասխանատու անձ Պահառուի հետ հարաբերություններում:
- 6.5 Իրավասու անձանց փոփոխության կամ ավելացման դեպքում, ինչպես նաև Կողմերի այլ վավերապայմանների փոփոխության դեպքում Կողմերը էլեկտրոնային փոստով ծանուցում են միմյանց այդպիսի փոփոխությունների վերաբերյալ փոփոխությունից առնվազ մեկ օր առաջ:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՄՈՒՄԸ

- 7.1 Սույն պայմանագրի գործողության կապակցությամբ առաջացած Կողմերի միջև վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով, իսկ 10 օրվա ընթացքում լուծման չգալու դեպքում՝ ՀՀ դատարանների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- 8.1 Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար և պարտավոր են այդ պարտականությունները խախտելու դեպքում հատուցել մյուս Կողմին պատճառված վնասը:
- 8.2 Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրի 5-րդ գլխում նշված իրենց երաշխիքների և հավաստիացումների արժանահավատության համար և պարտավոր են հատուցել մյուս Կողմին այդպիսի երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելու արդյունքում պատճառված վնասը: Կողմերը ազատվում են սույն պայմանագրով իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրա պատճառ է հանդիսացել մյուս Կողմի՝ սույն պայմանագրի 5-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստիացումների իրականությանը չհամապատասխանելը: Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է հատուցել երրորդ կողմին պատճառված ցանկացած վնաս, եթե այդ վնասը առաջանալու պատճառներից է հանդիսացել 5-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստիացումների իրականությանը չհամապատասխանելը:
- 8.3 Պահառուն պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ անվանատիրոջ հաշիվները վարող և սպասարկող, ինչպես նաև Պահառուի հաճախորդների և այդ թվում՝ Հաճախորդի միջոցների անվանատեր պահառու ընտրված անձանց անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև նրանց կողմից գործարքներով, այդ թվում՝ արժեթղթերի փոխանցման հանձնարարականներից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չգիտեր և չէր կարող իմանալ նշված հանգամանքների առկայության

կամ անխուսափելիության մասին: Այդուհանդերձ Պահառուն պարտավորվում է պատշաճ շրջահայացություն ցուցաբերել իր անմիջական գործընկեր հանդիսացող պահառուներ ընտրելիս՝ այնպես, որ հնարավորինս ապահովվի հաճախորդների շահերի պաշտպանությունը, եթե Պահառուն հնարավորություն ունի ընտրելու այդպիսի գործընկեր պահառուների:

8.4 Հաճախորդը պարտավորվում է հատուցել Պահառուի կրած ցանկացած վնաս, որը արդյունք է հանդիսացել սույն պայմանագրի համաձայն Պահառուի կողմից ծառայությունների մատուցման շրջանակներում երրորդ անձանց կողմից Պահառուին ներկայացված պահանջների բավարարման: Հաճախորդը ազատվում է պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե այդպիսի պահանջների հիմք են հանդիսացել Պահառուի՝ Հաճախորդի գործողություններով, այդ թվում՝ հանձնարարականներով չպայմանավորված անիրավաչափ գործողությունները:

9. ԱՅԼ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 9.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման/կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով, մինչև սույն պայմանագրով կամ օրենքով սահմանված հիմքերով դրա գործողության դադարումը: Բոլոր դեպքերում, սակայն, պայմանագիրը շարունակում է գործել ընդհուպ մինչև սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների և պարտականությունների լրիվ և պատշաճ կատարումը՝ նշված պարտավորությունների մասով: Պայմանագրի՝ կիրառելի Հավելվածների գործողությունը սահմանվում է 2.4-2.8. կետերով:
- 9.2 Սույն պայմանագիրը Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ կարող է լուծվել՝ մյուս Կողմին այդ մասին առնվազն 20 օր առաջ տեղյակ պահելու պայմանով:
- 9.3 Սույն պայմանագրի լուծման դեպքում Պահառուն ապահովում է Հաճախորդի արժեթղթերի և/կամ դրամական միջոցների վերադարձը վերջինիս՝ այդ միջոցները փոխանցելով Հաճախորդի կողմից նշված հաշիվներին՝ օրենքով սահմանված ժամկետներում:
- 9.4 Եթե պայմանագիրը լուծվել է Հաճախորդի նախաձեռնությամբ, վերջինս պարտավոր է հատուցել Պահառուին դրա լուծման հետևանքով սույն պայմանագրի 9.3. կետի համաձայն անհրաժեշտ դարձած գործողությունների հետ կապված ծախսերը:
- 9.5 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ՝ օժտված հավասար իրավաբանական ուժով:
- 9.6 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր ձևով Կողմերի համաձայնությամբ, բացառությամբ Սակագների փոփոխությունների և լրացումների, որոնք կատարվում են Պահառուի կողմից միակողմանիորեն: Հաճախորդի համար Պահառուի միակողմանի փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում՝ այդպիսի փոփոխությունների և լրացումների մասին Հաճախորդին գրավոր ծանուցելու օրվանից 21 օր հետո: Գրավոր ձևը համարվում է պահպանված, նաև եթե համապատասխան փոփոխության վերաբերյալ ծանուցումը (փոփոխության տեքստը ներառող տեքստը) ուղարկվել է Հաճախորդին՝ սույն պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեով, ընդ որում նշված դեպքում փոփոխությունը ուժի մեջ է մտնում այն ուղարկելու պահից 21 օր հետո:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՀԱՌՈՒ	ՀԱՃԱԽՈՐԴ
<p>«Ամերիբանկ» ՓԲԸ ՀՎՀՀ 02502212 Հ/Հ 103002101576 ՀՀ ԿԲ ՀՀ, 0010, ք. Երևան, Գ. Լուսավորչի 9, Էլ. հասցե. www.ameriabank.am Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյան Կ. Տ.</p>	<p>Ֆիզիկական անձի դեպքում՝ Ա.Ա., հասցե, նույնականացման փաստաթղթի տվյալները: Իրավաբանական անձի դեպքում՝ ԼՐԻՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ստորև նշված բոլոր տեղեկությունները՝ Գրանցման համարը, հասցեն, ՀՎՀՀ (առկայության դեպքում), հաշվի համարը (առկայության դեպքում), Էլ. հասցե</p>

	(առկայության դեպքում) Իրավասու անձի պաշտոնը, Ա.Ա. , ստորագրությունը: Կ. Տ.
--	--

Հավելված 2

Պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (ՊԱՀԱՌՈՒ) ԿՈՂՄԻՑ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1.1 Բրոքերային ծառայությունների մատուցման համար նախատեսված և դրանց արդյունքում ստացված հաճախորդի արժեթղթերի հաշվառման համար Պահառուն բացում և սպասարկում է Հաճախորդի արժեթղթերի հաշիվ այսուհետ՝ սույն Հավելվածում՝ Հաշիվ, որի վավերապայմանները Հաճախորդին կներկայացվեն սույն պայմանագիրը կնքելուց հետո 2 օրվա ընթացքում՝ էլեկտրոնային փոստով: Հաշիվը բացվում է սույն Հավելվածի և պայմանագրի, ինչպես նաև Կողմերի միջև Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման ուժով, և դրա և սույն պայմանագրի կնքումը հանդիսանում է Հաշիվը բացելու Հաճախորդի հանձնարարական:
- 1.2 Հաշվով գործառնությունների (արժեթղթերի մուտքագրում/ելքագրում) կատարման հիմք են հանդիսանում Պահառուի և Հաճախորդի միջև կնքված Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն տրված արժեթղթերի առքի/վաճառքի Հանձնարարականները:
- 1.3 Հաշվին արժեթղթեր կարող են մուտքագրվել նաև Հաճախորդի այլ արժեթղթերի հաշիվներից:
- 1.4 Սույնով կողմերը համաձայնվում են, որ Բրոքերային պայմանագրի հիման վրա տրված բրոքերային ծառայությունների մատուցման հանձնարարականը հանդիսանում է հաշվով համապատասխան պահառուական գործառնությունը կատարելու հանձնարարական, և արժեթղթերի մուտքագրման և փոխանցման համար անհրաժեշտ առանձին հանձնարարական Հաճախորդի կողմից չի ներկայացվում:
- 1.5 Բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով Պահառուական ծառայությունների մատուցման հետ կապված և սույն Հավելվածով կարգավորված առանձնահատկությունները կարգավորվում են «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (ԲՐՈՔԵՐ) ԿՈՂՄԻՑ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ-ով, որոնք հանդիսանում են Կողմերի միջև _____թ. կնքված Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Հավելված 3

Պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (ՊԱՀԱՌՈՒ) ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1.1 Հավատարմագրային ծառայությունների մատուցման համար նախատեսված և դրանց մատուցման արդյունքում ստացված Արժեթղթերի հաշվառման համար Պահառուն բացում և սպասարկում է Հաճախորդի հետևյալ արժեթղթերի հաշիվը՝-----, այսուհետ՝ սույն Հավելվածում՝ Հաշիվ: Հաշիվը բացվում է սույն Հավելվածի և պայմանագրի, ինչպես նաև Կողմերի միջև Արժեթղթերի Հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման ուժով, և սույն պայմանագրի կնքումը հանդիսանում է Հաշիվը բացելու Հաճախորդի հանձնարարական:

- 1.2 Հաշվում արժեթղթերի մուտքագրման և ելքագրման գործառնությունների կատարման հիմք է հանդիսանում Պահառուի կողմից Հավատարմագրային կառավարման պայմանագրի շրջանակներում ի շահ Հաճախորդի արժեթղթերի ձեռքբերման և վաճառքի գործարքների կնքումը կամ դրանց կնքման հանձնարարականների ներկայացումը Պահառուի ֆինանսական միջնորդներին:
- 1.3 Սույն հաշվից հաճախորդի միջոցների՝ սույն Հավելվածի 1.2. կետում նշվածից բացի այլ հիմքերով մուտքագրման ու ելքագրման հնարավորությունն ու կարգը սահմանվում են Հավատարմագրային կառավարման պայմանագրով:

Հավելված 4

Պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (ՊԱՀԱՌՈՒ) ԿՈՂՄԻՑ ԶՈՒՏ ՊԱՀԱՌՈՒՍԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1.1 Սույն Հավելվածով կարգավորվում են բրոքերային ծառայությունների հետ չկապված արժեթղթերի պահառության ծառայությունների մատուցման առանձնահատկությունները:
- 1.2 Բրոքերային ծառայությունների հետ չկապված և/կամ դրանից անկախ՝ արժեթղթերի պահառության ծառայության մատուցման նպատակներով և Հաճախորդի արժեթղթերի հաշվառման համար Պահառուն բացում և սպասարկում է Հաճախորդի հետևյալ արժեթղթերի հաշիվը՝ -----, այսուհետ՝ սույն Հավելվածում՝ Հաշիվ: Հաշիվը բացվում է սույն Հավելվածի և պայմանագրի կնքման ուժով, և սույն պայմանագրի կնքումը հանդիսանում է Հաշիվը բացելու Հաճախորդի հանձնարարական:
- 1.3 Հաշվից արժեթղթերի փոխանցումը և Հաշվին արժեթղթերի մուտքագրումը իրականացվում է 8OD FO 72-19-01 արժեթղթերի փոխանցման հանձնարարագրի հիման վրա:
- 1.4 Հաշվում առկա արժեթղթերի գրավադրումը/արգելադրումը և գրավադրումից/արգելադրումից հանելը իրականացվում է համապատասխանաբար 8OD FO 72-19-02 արժեթղթերի արգելադրման/գրավադրման/ և 8OD FO 72-19-03 արժեթղթերի արգելադրման/գրավադրման դադարեցման հանձնարարագրերի հիման վրա:
- 1.5 Սույն Հավելվածի 1.3. և 1.4 կետերում նշված գործառնությունները իրականացվում են համապատասխան Հանձնարարագրերը Պահառուին ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
- 1.6 Պետական Գանձապետական պարտատոմսերով պահառուական գործառնությունները Բանկի կողմից կատարվում են պետական պարտատոմսերի պահառությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերին և Պահառուի ներքին իրավական ակտերին համապատասխան:
- 1.7 Հանձնարարագրերը ոչ իրավասու անձի կողմից ներկայացնելը, սահմանված ձևի խախտմամբ և/ կամ բովանդակության բացակայությամբ ներկայացնելը հիմք է Հանձնարարագրի կատարման մերժման համար:

Հավելված 5

Պահառուական ծառայությունների մատուցման պայմանագրի

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (ՊԱՀԱՌՈՒ) ԿՈՂՄԻՑ ԶՈՒՏ ՊԱՀԱՌՈՒՍԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (անվանատիրոջ համար)

- 1.1 Սույն Հավելվածով կարգավորվում են Պահառուի կողմից բրոքերային ծառայությունների հետ չկապված պահառու հանդիսացող այլ անձին արժեթղթերի պահառության ծառայությունների մատուցման առանձնահատկությունները:
- 1.2 Պահառուի կողմից բրոքերային ծառայությունների հետ չկապված և/կամ դրանից անկախ՝ պահառու հանդիսացող այլ անձին արժեթղթերի պահառության ծառայության մատուցման

նպատակներով և Հաճախորդի արժեթղթերի հաշվառման համար Պահառուն բացում և սպասարկում է Հաճախորդի հետևյալ արժեթղթերի հաշիվը`-----, այսուհետ` սույն Հավելվածում` Հաշիվ: Հաշիվը բացվում է սույն Հավելվածի և պայմանագրի կնքման ուժով, և սույն պայմանագրի կնքումը հանդիսանում է Հաշիվը բացելու Հաճախորդի հանձնարարական: Հաշիվը հանդիսանում է անվանատիրոջ հաշիվ:

- 1.3 Հաշվից արժեթղթերի փոխանցումը կամ Հաշվին արժեթղթերի մուտքագրումը իրականացվում է 8OD FO 72-19-01 արժեթղթերի փոխանցման հանձնարարագրի հիման վրա::
- 1.4 Հաշվում առկա արժեթղթերի գրավաղորումը/արգելաղորումը և գրավաղորումից /արգելաղորումից հանելը իրականացվում է համապատասխանաբար 8OD FO 72-19-02 արժեթղթերի արգելաղորման/գրավաղորման/ և 8OD FO 72-19-03 արժեթղթերի արգելաղորման/գրավաղորման դադարեցման հանձնարարագրերի հիման վրա::
- 1.5 Սույն Հավելվածի 1.3 և 1.4 կետերում նշված գործառնությունները իրականացվում են համապատասխան Հանձնարարագրերը Պահառուին ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
- 1.6 Պետական Գանձապետական պարտատոմսերով պահառուական գործառնությունները Բանկի կողմից կատարվում են պետական պարտատոմսերի պահառությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերին և Պահառուի ներքին իրավական ակտերին համապատասխան:
- 1.7 Հանձնարարագրերը ոչ իրավասու անձի կողմից ներկայացնելը, սահմանված ձևի խախտմամբ և/ կամ բովանդակության բացակայությամբ ներկայացնելը հիմք է Հանձնարարագրի կատարման մերժման համար: